

Թիւ 20239
Փետրուար 12, 1968

Հոգեշնորհ
Տ. Ժիրայր Վրդ. Թաշնեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Նկեղեցւոյ
եւ Նախագահ Միական Խորհուրդի
Թորոնթօ.

Սիրելի հայր Ժիրայր.

Նոյեմբեր 10, 1967 թուականէ Ձեզի ղրկուած թիւ 137 մեր շրջաբե-
րականով յանձնարարած էինք Յունուաց ամսուայ ընթացքին գումարել Միա-
կան Ժողովը եւ անմիջապէս Առաջնորդարան ղրկել.

1. Միական Ժողովի ընտրութեան արդիւնքը:
2. Միական Ժողովի ներկայացուած տեղեկագիրները:
3. Առաջնորդարանէն ուղարկուած տպագրեալ տեղեկագիրը:
4. Միական Ժողովի ներկայացուած հլեւմտական հաշուեցոյցը:
5. Թեմական պատգամաւորներու անունը եւ հասցէն:
6. Նկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենա-
պետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Ստացած ենք Յունուար 29, 1968 թուակիր Ձեր տեղեկագիրը, որուն
չէիք կցած թիւ 2, 3, 4, 5 եւ 6 նիւթերը: Որո՞նք յիշուած են վերոյիշ-
եալ շրջաբերականին մէջ:

Ոստի, հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել սոյն նիւթերը, որպէսզի
առաջին առիթով վաւերացնենք Տարեկան Միական Ժողովի ընտրութիւնները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ